



Մամլո հաղորդագրություն

Policy Forum Armenia
1250 I Street N.W., Suite 710
Washington, D.C. 20005
www.pf-armenia.org
Email: news@pf-armenia.org

ՔԲԲ-ի արձագանքը Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին

2 մարտի 2008թ.
Վաշինգտոն, ԱՄՆ

Policy Forum Armenia կազմակերպությունը խորապես անհանգստացած է Հայաստանում տեղի ունեցած վերջին իրադարձությունների կապակցությամբ: Մենք խստորեն դատապարտում ենք բռնության և ուժի կիրառումը խաղաղ և անզեն ցուցարարների հանդեպ, հատկապես մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունները: Մենք սգում ենք զոհվածների համար: Գտնում ենք, որ հիմնական պատասխանատվությունը կրում են նրանք, ովքեր ուժի կիրառման հրաման են արձակել Հայաստանի ազատության խորհրդանիշ Ազատության հրապարակում քնած մարդկանց հանդեպ:

Ելնելով հայ ժողովրդի լավագույն շահերից և հաշվի առնելով իրադարձությունների աննախադեպ բնույթը՝ մենք՝ աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայազգի մասնագետներս, միանում ենք բարի կամք դրսևորող մյուս մարդկանց ու հորդորում Հայաստանի իշխանություններին.

- Դադարեցնել քաղաքական առաջնորդների ու ակտիվիստների ձերբակալությունները:
- Ազատ արձակել ձերբակալված ցուցարարներին կամ օրենքով նախատեսված իրավաբանական ծառայություն տրամադրել նրանց:
- Տուժած ու վիրավորված քաղաքացիներին տրամադրել համապատասխան բժշկական օգնություն:
- Ապահովել իրադարձությունների օբեկտիվ, ամբողջական ու ճշգրիտ լուսաբանումը:
- Վերացնել արտակարգ իրավիճակը՝ վերականգնել սահմանադրական կարգը երկրում:
- Ապահովել ազատ խոսքի ու հավաքվելու քաղաքացիների սահմանադրական իրավունքի ազատ, անկաշկանդ իրականացումը:

Մենք հորդորում ենք միջազգային հանրությանը օգտագործել դիվանագիտական բոլոր միջոցները՝ Հայաստանում ազատ, արդար և

թափանցիկ ընտրությունների անցկացմանը հետամուտ՝ համաձայն
Հայաստանի միջազգային պարտավորությունների ու պարտականությունների:

Խրախուսում ենք հայաստանյան քաղաքացիական հասարակությանը
շարունակել իր պայքարը Հայաստանում ժողովրդավարական նորմերի ու
սկզբունքների հաստատման ուղղությամբ՝ ներառյալ ազատ, արդար ու
թափանցիկ ընտրությունների իրականացումը:

Հորդորում ենք Հայաստանի կայունությամբ ու բարեկեցությամբ շահագրգիռ
կողմերին ամեն ջանք գործադրել՝ խուսափելու իրավիճակի հետագա
վատթարացումից ու կյանքի կորստից: